



Կադաստրի
կոմիտե

Անշարժ գույքի շուկայի վերլուծություն

2022 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐ

Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտե

www.cadastre.am

Բովանդակություն

1	ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՐԾԱՐՔՆԵՐ	2
1.1	Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկայում իրականացված ընդհանուր գործարքների վերլուծություն	2
1.2	Երևան քաղաքի անշարժ գույքի շուկայում իրականացված ընդհանուր գործարքների վերլուծություն	8
1.3	Մարզերում անշարժ գույքի շուկայում իրականացված ընդհանուր գործարքների վերլուծություն	12
2	ՕՏԱՐՄԱՆ ԳՈՐԾԱՐՔՆԵՐ	14
2.1	Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկայում իրականացված օտարման գործարքների վերլուծություն	14
3	ԱՌՈՒՎԱՃԱՌՔԻ ԳՈՐԾԱՐՔՆԵՐ	19
3.1	Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկայում իրականացված առուվաճառքի գործարքների վերլուծություն	19
3.2	Երևան քաղաքում անշարժ գույքի շուկայում իրականացված առուվաճառքի գործարքների վերլուծություն	23
3.3	Մարզերում անշարժ գույքի շուկայում իրականացված առուվաճառքի գործարքների վերլուծություն	25
3.4	Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկայում իրավաբանական անձանց կողմից իրականացված առուվաճառքի գործարքների վերլուծություն	26
3.5	Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկայում օտարերկրյա քաղաքացիների կողմից իրականացված առուվաճառքի գործարքների վերլուծություն	29
3.6	Բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների վերլուծություն	34
3.7	Հողերի առուվաճառքի գործարքների վերլուծություն	40
4	ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՐՔՆԵՐ	46
4.1	Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկայում իրականացված վարձակալության գործարքների վերլուծություն	46
4.2	Երևան քաղաքում անշարժ գույքի շուկայում իրականացված վարձակալության գործարքների վերլուծություն	50
4.3	Մարզերում անշարժ գույքի շուկայում իրականացված վարձակալության գործարքների վերլուծություն	53
5	ԳՐԱՎԱԴՐՄԱՆ ԳՈՐԾԱՐՔՆԵՐ	55
5.1	Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկայում իրականացված գրավադրման գործարքների վերլուծություն	55
5.2	Երևան քաղաքում անշարժ գույքի շուկայում իրականացված գրավադրման գործարքների վերլուծություն	59
5.3	Մարզերում անշարժ գույքի շուկայում իրականացված գրավադրման գործարքների վերլուծություն	62
5.4	Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկայում իրականացված հիփոթեքային գրավադրման գործարքների վերլուծություն	63

Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2022 թվականի փետրվարին (վերլուծություն)

Անշարժ գույքի շուկայի վերլուծությունը կատարվել է՝ հիմք ընդունելով 2022 թվականի փետրվար ամսվա ընթացքում անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների վերաբերյալ տվյալները և անշարժ գույքի առաջարկի շուկայից հավաքագրված տեղեկությունները:


1 ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՐԾԱՐՔՆԵՐ

1.1 Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկայում իրականացված ընդհանուր գործարքների վերլուծություն

1.1.1 2022 թվականի փետրվարին հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել է 14,235 իրավունքի պետական գրանցման գործարք:

2010-2022 թվականների փետրվար ամսվա անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակները ներկայացված են Գծապատկեր 1.1-ում.


Գծապատկեր 1.1-1




1.1.2 Հանրապետությունում 2022 թվականի փետրվարին անշարժ գույքի նկատմամբ գրանցված գործարքների առավել բարձր տոկոսաչափը գրանցվել է Երևան քաղաքում՝ 32.7 %, իսկ առավել ցածրը՝ Վայոց ձորի մարզում՝ 2.1 %:

Գծապատկեր 1.1-2-ում և Գծապատկեր 1.1-3-ում ներկայացված է 2022 թվականի փետրվարին հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների տոկոսային և քանակական բաշխվածությունը ըստ Երևան քաղաքի և մարզերի:

Գծապատկեր 1.1-2



Գծապատկեր 1.1-3




Աղյուսակ 1.1-1-ում ներկայացված է 2022 թվականի փետրվարին հանրապետությունում իրականացված ընդհանուր գործարքների քանակական համեմատությունը 2021 թվականի փետրվար և 2022 թվականի հունվար ամիսների նկատմամբ:

Աղյուսակ 1.1-1

	2021 թվականի փետրվար	փոփոխումը	2022 թվականի փետրվար	փոփոխումը	2022 թվականի հունվար
Երևան	4,091	13.6%	4,649	24.7%	3,728
Արագածոտն	948	-19.8%	760	31.5%	578
Արարատ	1,666	-19.0%	1,349	30.3%	1,035
Արմավիր	1,257	-8.8%	1,147	13.7%	1,009
Գեղարքունիք	1,024	6.1%	1,086	34.7%	806
Լոռի	889	-9.7%	803	25.5%	640
Կոտայք	2,227	-2.6%	2,168	11.5%	1,944
Շիրակ	836	-11.5%	740	31.7%	562
Սյունիք	549	10.2%	605	43.4%	422
Վայոց ձոր	336	-9.5%	304	49.8%	203
Տավուշ	685	-8.9%	624	20.7%	517
Հանրապետություն	14,508	-1.9%	14,235	24.4%	11,444

Գծապատկեր 1.1-4-ում ներկայացված է 2010-2022 թվականների փետրվար ամսվա անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակները ըստ Երևան քաղաքի, մարզերի քաղաքային և գյուղական բնակավայրերի.

Գծապատկեր 1.1-4




2022 թվականի փետրվարին հանրապետությունում գրանցված գործարքների քանակը 2022 թվականի հունվարի համեմատ աճել է 24.4 %-ով, իսկ 2021 թվականի փետրվարի համեմատ՝ նվազել 1.9 %-ով: Երևան քաղաքում 2022 թվականի փետրվարին գրանցված գործարքների քանակը 2022 թվականի հունվարի համեմատ աճել է 24.7 %-ով, իսկ 2021 թվականի փետրվարի համեմատ՝ 13.6 %-ով: Մարզերի քաղաքային բնակավայրերում 2022 թվականի փետրվարին գրանցված գործարքների քանակը 2022 թվականի հունվարի համեմատ աճել է 22.4 %-ով, 2021 թվականի փետրվարի համեմատ՝ նվազել 8.9 %-ով, իսկ գյուղական բնակավայրերում 2022 թվականի փետրվարին գրանցված գործարքների քանակը 2022 թվականի հունվարի համեմատ աճել է 25.2 %-ով, 2021 թվականի փետրվարի համեմատ՝ նվազել 7.5 %-ով:


1.1.3 Հանրապետությունում 2022 թվականի փետրվարին ընդհանուր գործարքների առավել բարձր տոկոսաչափը՝ 39.0 %, գրանցվել է օտարման, իսկ առավել ցածրը՝ 1.0 %՝ օրինականացման գործարքների նկատմամբ:

Գծապատկեր 1.1-5-ում և Գծապատկեր 1.1-6-ում ներկայացված է 2022 թվականի փետրվարին հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների տոկոսային և քանակական բաշխվածությունը ըստ տեսակների:

Գծապատկեր 1.1-5



Գծապատկեր 1.1-6



Աղյուսակ 1.1-2-ում ներկայացված է 2022 թվականի փետրվարին հանրապետությունում իրականացված ընդհանուր գործարքների քանակական համեմատությունը 2021 թվականի փետրվար և 2022 թվականի հունվար ամիսների նկատմամբ:

Աղյուսակ 1.1-2

Հ/Հ	Գործարքի տեսակ	2021 թվականի փետրվար	փոփոխումը	2022 թվականի փետրվար	փոփոխումը	2022 թվականի հունվար
1	Օտարում	5,376	3.3%	5,551	19.7%	4,636
1ա	Առուվաճառք	3,902	0.7%	3,930	18.7%	3,310
1բ	Նվիրատվություն	1,398	6.4%	1,487	17.1%	1,270
1գ	Փոխանակում	7	14.3%	8	14.3%	7
1դ	Օտարման այլ տեսակ	69	82.6%	126	2.6 անգամ	49
2	Վարձակալություն	882	-14.1%	758	36.1%	557
3	Գրավադրում	1,475	18.8%	1,753	39.1%	1,260
4	Ժառանգություն	2,662	13.1%	3,011	26.2%	2,385
5	Օրինականացում	355	-61.4%	137	-1.4%	139
6	Առաջնային գրանցում	2,532	-33.7%	1,679	40.5%	1,195
7	Պետգր. /վերագրանցում/	1,226	9.8%	1,346	5.8%	1,272
Ընդամենը /գործարք/		14,508	-1.9%	14,235	24.4%	11,444

Աղյուսակ 1.1-3-ում ներկայացված է հանրապետությունում 2022 թվականի փետրվարին անշարժ գույքի նկատմամբ գրանցված գործարքների քանակական և տոկոսային բաշխվածությունը ըստ գործարքի տեսակների.


Աղյուսակ 1.1-3

Գործարքի տեսակ		Հանրապետություն		Երևան			Մարզերի քաղաքային բնակավայրեր			Գյուղական բնակավայրեր		
		քանակ	%	քանակ	%	տեսակարար կշիռը նմանատիպ գործարքներում	քանակ	%	տեսակարար կշիռը նմանատիպ գործարքներում	քանակ	%	տեսակարար կշիռը նմանատիպ գործարքներում
1	Օտարում	5,551	39.0%	1,772	38.1%	31.9%	1,381	41.2%	24.9%	2,398	38.5%	43.2%
1ա	Առուվաճառք	3,930	27.6%	1,335	28.7%	34.0%	946	28.2%	24.1%	1,649	26.5%	42.0%
1բ	Նվիրատվություն	1,487	10.4%	414	8.9%	27.8%	364	10.9%	24.5%	709	11.4%	47.7%
1գ	Փոխանակում	8	0.1%	4	0.1%	50.0%	0	0.0%	0.0%	4	0.1%	50.0%
1դ	Օտարման այլ տեսակ	126	0.9%	19	0.4%	15.1%	71	2.1%	56.3%	36	0.6%	28.6%
2	Վարձակալություն	758	5.3%	460	9.9%	60.7%	179	5.3%	23.6%	119	1.9%	15.7%
3	Գրավադրում	1,753	12.3%	915	19.7%	52.2%	468	14.0%	26.7%	370	5.9%	21.1%
4	Ժառանգություն	3,011	21.2%	599	12.9%	19.9%	630	18.8%	20.9%	1,782	28.6%	59.2%
5	Օրինականացում	137	1.0%	32	0.7%	23.4%	33	1.0%	24.1%	72	1.2%	52.6%
6	Առաջնային գրանցում	1,679	11.8%	516	11.1%	30.7%	398	11.9%	23.7%	765	12.3%	45.6%
7	Պետգր. /վերագրանցում/	1,346	9.5%	355	7.6%	26.4%	265	7.9%	19.7%	726	11.6%	53.9%
Ընդամենը /գործարք/		14,235	100.0%	4,649	100.0%	32.7%	3,354	100.0%	23.6%	6,232	100.0%	43.8%


1.1.4 Հանրապետությունում 2022 թվականի փետրվարին ընդհանուր գործարքների առավել բարձր տոկոսաչափը՝ 37.5 %, գրանցվել է հողերի, իսկ առավել ցածրը՝ 2.3 %՝ արտադրական նշանակության շինությունների նկատմամբ:

Գծապատկեր 1.1-7-ում և Գծապատկեր 1.1-8-ում ներկայացված են 2022 թվականի փետրվարին հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների տոկոսային և քանակական բաշխվածությունը ըստ գույքի տեսակների.

Գծապատկեր 1.1-7



Գծապատկեր 1.1-8



Աղյուսակ 1.1-4-ում ներկայացված է 2022 թվականի փետրվարին հանրապետությունում իրականացված ընդհանուր գործարքների քանակական համեմատությունը 2021 թվականի փետրվար և 2022 թվականի հունվար ամիսների նկատմամբ.

Աղյուսակ 1.1-4

Հ/Հ	Գույքի տեսակ	2021 թվականի փետրվար	փոփոխումը	2022 թվականի փետրվար	փոփոխումը	2022 թվականի հունվար
1	Բնակարան	3,559	9.3%	3,890	23.1%	3,159
2	Անհատական բնակելի տուն	3,233	-1.6%	3,181	25.1%	2,542
3	Արտադրական նշ. շին	324	3.1%	334	-3.7%	347
4	Հասարակական նշ. շին.	1,136	-3.0%	1,102	2.9%	1,071
5	Ավտոտնակ	516	-24.8%	388	17.6%	330
6	Հող	5,740	-7.0%	5,340	33.7%	3,995
6ա	ա/թ գյուղատնտ. նշ. հող	3,684	-9.3%	3,340	28.1%	2,608
Ընդամենը		14,508	-1.9%	14,235	24.4%	11,444

Աղյուսակ 1.1-5-ում ներկայացված է հանրապետությունում 2022 թվականի փետրվարին անշարժ գույքի նկատմամբ գրանցված գործարքների քանակական և տոկոսային բաշխվածությունը ըստ գույքի տեսակների.

Աղյուսակ 1.1-5


Գույքի տեսակ		Հանրապետություն		Երևան			Մարզերի քաղաքային բնակավայրեր			Գյուղական բնակավայրեր		
		քանակ	%	քանակ	%	տեսակ արար կշիռը նմանատիպ գործարքներում	քանակ	%	տեսակ արար կշիռը նմանատիպ գործարքներում	քանակ	%	տեսակ արար կշիռը նմանատիպ գործարքներում
1	Բնակարան	3,890	27.3%	2,473	53.2%	63.6%	1,316	39.2%	33.8%	101	1.6%	2.6%
2	Անհատական բնակելի տուն	3,181	22.3%	734	15.8%	23.1%	769	22.9%	24.2%	1,678	26.9%	52.8%
3	Արտադրական նշ. շին	334	2.3%	131	2.8%	39.2%	68	2.0%	20.4%	135	2.2%	40.4%
4	Հասարակական նշ. շին.	1,102	7.7%	587	12.6%	53.3%	361	10.8%	32.8%	154	2.5%	14.0%
5	Ավտոտնակ	388	2.7%	284	6.1%	73.2%	87	2.6%	22.4%	17	0.3%	4.4%
6	Հող	5,340	37.5%	440	9.5%	8.2%	753	22.5%	14.1%	4,147	66.5%	77.7%
6ա	Ա/թ գյուղատնտ. նշ. հող	3,340	23.5%	83	1.8%	2.5%	350	10.4%	10.5%	2,907	46.6%	87.0%
Ընդամենը /գործարք/		14,235	100.0%	4,649	100.0%	32.7%	3,354	100.0%	23.6%	6,232	100.0%	43.8%

1.2 Երևան քաղաքի անշարժ գույքի շուկայում իրականացված ընդհանուր գործարքների վերլուծություն

1.2.1 Երևան քաղաքում 2022 թվականի փետրվարին անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի առավել բարձր տոկոսաչափն արձանագրվել է Կենտրոն՝ 15.9 %, իսկ ցածրը՝ 0.7 %, Նուբարաշեն վարչական շրջաններում:

Գծապատկեր 1.2-1-ում ներկայացված է 2022 թվականի փետրվարին Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների քանակական բաշխվածությունը ըստ վարչական շրջանների.

Երևան քաղաքում ընդհանուր գործարքների քանակական բաշխվածությունը ըստ վարչական շրջանների



Աղյուսակ 1.2-1-ում ներկայացված է 2022 թվականի փետրվարին Երևան քաղաքում իրականացված ընդհանուր գործարքների քանակական համեմատությունը 2021 թվականի փետրվար և 2022 թվականի հունվար ամիսների նկատմամբ:


Աղյուսակ 1.2-1

Վարչական շրջան	2021 թվականի փետրվար	փոփոխումը	2022 թվականի փետրվար	փոփոխումը	2022 թվականի հունվար
Դավթաշեն	176	55.7%	274	52.2%	180
Էրեբունի	243	21.4%	295	3.5%	285
Աջափնյակ	435	16.1%	505	53.0%	330
Ավան	145	20.7%	175	21.5%	144
Արաբկիր	651	8.9%	709	45.6%	487
Կենտրոն	701	5.7%	741	6.3%	697
Մալաթիա-Սեբաստիա	456	36.4%	622	49.9%	415
Քանաքեռ-Զեյթուն	340	-25.0%	255	5.8%	241
Շենգավիթ	493	3.9%	512	17.7%	435
Նոր Նորք	382	18.8%	454	7.1%	424
Նորք-Մարաշ	44	68.2%	74	27.6%	58
Նուբարաշեն	25	32.0%	33	3.1%	32
Երևան	4,091	13.6%	4,649	24.7%	3,728

1.2.2 Երևան քաղաքում 2022 թվականի փետրվարին ընդհանուր գործարքների առավել բարձր տոկոսաչափը՝ 38.1 %, գրանցվել է օտարման, իսկ առավել ցածրը՝ 0.7 %՝ օրինականացման գործարքների նկատմամբ:

Գծապատկեր 1.2-2-ում ներկայացված է 2022 թվականի փետրվարին Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների քանակական բաշխվածությունը ըստ տեսակների:

Գծապատկեր 1.2-2



Աղյուսակ 1.2-2-ում ներկայացված է 2022 թվականի փետրվարին Երևան քաղաքում իրականացված գործարքների քանակական համեմատությունը 2021 թվականի փետրվար և 2022 թվականի հունվար ամիսների նկատմամբ:


Աղյուսակ 1.2-2

Ը/Ը	Գործարքի տեսակ	2021 թվականի փետրվար	փոփոխումը	2022 թվականի փետրվար	փոփոխումը	2022 թվականի հունվար
1	Օտարում	1,582	12.0%	1,772	23.1%	1,440
1ա	Առուվաճառք	1,152	15.9%	1,335	28.7%	1,037
1բ	Նվիրատվություն	409	1.2%	414	9.5%	378
1գ	Փոխանակում	2	2.0 անգամ	4	2.0 անգամ	2
1դ	Օտարման այլ տեսակ	19	0.0%	19	-17.4%	23
2	Վարձակալություն	458	0.4%	460	24.7%	369
3	Գրավադրում	821	11.4%	915	35.6%	675
4	Ժառանգություն	530	13.0%	599	28.0%	468
5	Օրինականացում	70	-54.3%	32	39.1%	23
6	Առաջնային գրանցում	359	43.7%	516	2.0 անգամ	257
7	Պետգր. /վերագրանցում/	271	31.0%	355	-28.4%	496
Ընդամենը /գործարք/		4,091	13.6%	4,649	24.7%	3,728

1.2.3 Երևան քաղաքում 2022 թվականի փետրվարին ընդհանուր գործարքների առավել բարձր տոկոսաչափը՝ 53.2 %, գրանցվել է բնակարանների, իսկ առավել ցածրը՝ 2.8 %՝ արտադրական նշանակության շինությունների նկատմամբ:

Գծապատկեր 1.2-3-ում ներկայացված է 2022 թվականի փետրվարին Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների քանակական բաշխվածությունը ըստ գույքի տեսակների.

Գծապատկեր 1.2-3



Աղյուսակ 1.2-3-ում ներկայացված է 2022 թվականի փետրվարին Երևան քաղաքում իրականացված ընդհանուր գործարքների քանակական համեմատությունը 2021 թվականի փետրվար և 2022 թվականի հունվար ամիսների նկատմամբ.

Աղյուսակ 1.2-3


Ը/Ը	Գույքի տեսակ	2021 թվականի փետրվար	փոփոխումը	2022 թվականի փետրվար	փոփոխումը	2022 թվականի հունվար
1	Բնակարան	2,220	11.4%	2,473	30.1%	1,901
2	Անհատական բնակելի տուն	629	16.7%	734	34.7%	545
3	Արտադրական նշ. շին	107	22.4%	131	-10.3%	146
4	Հասարակական նշ. շին.	577	1.7%	587	-9.3%	647
5	Ավտոտնակ	255	11.4%	284	34.0%	212
6	Հող	303	45.2%	440	58.8%	277
6ա	ա/թ գյուղատնտ. նշ. հող	59	40.7%	83	93.0%	43
Ընդամենը		4,091	13.6%	4,649	24.7%	3,728

1.3 Մարզերում անշարժ գույքի շուկայում իրականացված ընդհանուր գործարքների վերլուծություն

1.3.1 Մարզերում 2022 թվականի փետրվարին ընդհանուր գործարքների առավել բարձր տոկոսաչափը՝ 39.4 %, գրանցվել է օտարման, իսկ առավել ցածրը՝ 1.1 %՝ օրինականացման գործարքների նկատմամբ:

Գծապատկեր 1.3-1-ում ներկայացված է 2022 թվականի փետրվարին մարզերում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների քանակական բաշխվածությունը ըստ տեսակների:

Գծապատկեր 1.3-1



Աղյուսակ 1.3-1-ում ներկայացված է 2022 թվականի փետրվարին մարզերում իրականացված ընդհանուր գործարքների քանակական համեմատությունը 2021 թվականի փետրվար և 2022 թվականի հունվար ամիսների նկատմամբ:


Աղյուսակ 1.3-1

Հ/Հ	Գործարքի տեսակ	2021 թվականի փետրվար	փոփոխումը	2022 թվականի փետրվար	փոփոխումը	2022 թվականի հունվար
1	Օտարում	3,794	-0.4%	3,779	18.2%	3,196
1ա	Առուվաճառք	2,750	-5.6%	2,595	14.2%	2,273
1բ	Նվիրատվություն	989	8.5%	1,073	20.3%	892
1գ	Փոխանակում	5	-20.0%	4	-20.0%	5
1դ	Օտարման այլ տեսակ	50	2.1 անգամ	107	4.1 անգամ	26
2	Վարձակալություն	424	-29.7%	298	58.5%	188
3	Գրավադրում	654	28.1%	838	43.2%	585
4	Ժառանգություն	2,132	13.1%	2,412	25.8%	1,917
5	Օրինականացում	285	-63.2%	105	-9.5%	116
6	Առաջնային գրանցում	2,173	-46.5%	1,163	24.0%	938
7	Պետգր. /վերագրանցում/	955	3.8%	991	27.7%	776
	Ընդամենը /գործարք/	10,417	-8.0%	9,586	24.2%	7,716

1.3.2 Մարզերում 2022 թվականի փետրվարին ընդհանուր գործարքների առավել բարձր տոկոսաչափը՝ 51.1 %, գրանցվել է հողերի, իսկ առավել ցածրը՝ 1.1 % ավտոտնակների նկատմամբ:

Գծապատկեր 1.3-4-ում ներկայացված է 2022 թվականի փետրվարին մարզերում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների քանակական բաշխվածությունը ըստ գույքի տեսակների:

Գծապատկեր 1.3-4



Աղյուսակ 1.3-4-ում ներկայացված է 2022 թվականի փետրվարին մարզերում իրականացված ընդհանուր գործարքների քանակական համեմատությունը 2021 թվականի փետրվար և 2022 թվականի հունվար ամիսների նկատմամբ:

Աղյուսակ 1.3-4

Ը/Ը	Գույքի տեսակ	2021 թվականի փետրվար	փոփոխումը	2022 թվականի փետրվար	փոփոխումը	2022 թվականի հունվար
1	Բնակարան	1,339	5.8%	1,417	12.6%	1,258
2	Անհատական բնակելի տուն	2,604	-6.0%	2,447	22.5%	1,997
3	Արտադրական նշ. շին	217	-6.5%	203	1.0%	201
4	Հասարակական նշ. շին.	559	-7.9%	515	21.5%	424
5	Ավտոտնակ	261	-60.2%	104	-11.9%	118
6	Հող	5,437	-9.9%	4,900	31.8%	3,718
ճա	ա/թ գյուղատնտ. նշ. հող	3,625	-10.2%	3,257	27.0%	2,565
Ընդամենը		10,417	-8.0%	9,586	24.2%	7,716


2 ՕՏԱՐՄԱՆ ԳՈՐԾԱՐՔՆԵՐ

2.1 Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկայում իրականացված օտարման գործարքների վերլուծություն

2.1.1 2022 թվականի փետրվարին անշարժ գույքի նկատմամբ իրականացվել է 5,551 օտարման գործարք, որը կազմել է անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 39.0 %-ը:


2010-2022 թվականների փետրվար ամսվա անշարժ գույքի օտարման գործարքների քանակները ներկայացված են Գծապատկեր 2.1-1-ում.

Գծապատկեր 2.1-1




2.1.2 Հանրապետությունում 2022 թվականի փետրվարին անշարժ գույքի նկատմամբ գրանցված օտարման գործարքների առավել բարձր տոկոսաչափը՝ 31.9 %, գրանցվել է Երևան քաղաքում, իսկ առավել ցածրը՝ 1.6 %՝ Վայոց ձորի մարզում:

Գծապատկեր 2.1-2-ում և Գծապատկեր 2.1-3-ում ներկայացված է 2022 թվականի փետրվարին հանրապետությունում իրականացված օտարման գործարքների տոկոսային և քանակական բաշխվածությունը ըստ Երևան քաղաքի և մարզերի.



Գծապատկեր 2.1-3



Աղյուսակ 2.1-1-ում ներկայացված է 2022 թվականի փետրվարին հանրապետությունում իրականացված օտարման գործարքների քանակական համեմատությունը 2021 թվականի փետրվար և 2022 թվականի հունվար ամիսների նկատմամբ:


	2021 թվականի փետրվար	փոփոխումը	2022 թվականի փետրվար	փոփոխումը	2022 թվականի հունվար
Երևան	1,582	12.0%	1,772	23.1%	1,440
Արագածոտն	307	-14.7%	262	4.0%	252
Արարատ	599	-3.7%	577	11.2%	519
Արմավիր	575	-7.8%	530	8.2%	490
Գեղարքունիք	264	50.8%	398	72.3%	231
Լոռի	285	2.8%	293	5.8%	277
Կոտայք	928	0.2%	930	15.8%	803
Շիրակ	287	-6.6%	268	18.1%	227
Սյունիք	211	-0.9%	209	71.3%	122
Վայոց ձոր	123	-26.8%	90	21.6%	74
Տավուշ	215	3.3%	222	10.4%	201
Հանրապետություն	5,376	3.3%	5,551	19.7%	4,636

2022 թվականի փետրվարին հանրապետությունում գրանցված օտարման գործարքների քանակը 2022 թվականի հունվարի համեմատ աճել է 19.7 %-ով, 2021 թվականի փետրվարի համեմատ՝ 3.3 %-ով, Երևան քաղաքում 2022 թվականի հունվարի համեմատ աճել է 23.1 %-ով, 2021 թվականի փետրվարի համեմատ՝ 12.0 %-ով, մարզերի քաղաքային բնակավայրերում 2022 թվականի հունվարի համեմատ աճել է 17.8 %-ով, 2021 թվականի փետրվարի համեմատ՝ 6.4 %-ով, իսկ գյուղական բնակավայրերում 2022 թվականի հունվարի համեմատ աճել է 18.5 %-ով, 2021 թվականի փետրվարի համեմատ՝ նվազել 3.9 %-ով:


2.1.3 Հանրապետությունում 2022 թվականի փետրվարին օտարման գործարքների առավել բարձր տոկոսաչափը՝ 40.4 % գրանցվել է հողերի, իսկ առավել ցածրը՝ 1.1 % արտադրական նշանակության շինությունների նկատմամբ:

Գծապատկեր 2.1-4-ում և Գծապատկեր 2.1-5-ում ներկայացված է 2022 թվականի փետրվարին հանրապետությունում անշարժ գույքի օտարման գործարքների տոկոսային և քանակական բաշխվածությունը ըստ գույքի տեսակների:

Հանրապետությունում օտարման գործարքների տոկոսային բաշխվածությունը ըստ գույքի տեսակի



Հանրապետությունում օտարման գործարքների քանակական բաշխվածությունը ըստ գույքի տեսակի




Աղյուսակ 2.1-2-ում ներկայացված է հանրապետությունում 2022 թվականի փետրվարին անշարժ գույքի օտարման գործարքների քանակական և տոկոսային բաշխվածությունը ըստ գույքի տեսակի.

Աղյուսակ 2.1-2

Գույքի տեսակ		Հանրապետություն		Երևան			Մարզերի քաղաքային բնակավայրեր			Գյուղական բնակավայրեր		
		քանակ	%	քանակ	%	տեսակարար կշիռը նմանատիպ գործարքներում	քանակ	%	տեսակարար կշիռը նմանատիպ գործարքներում	քանակ	%	տեսակարար կշիռը նմանատիպ գործարքներում
1	Բնակարան	1,740	31.3%	1,106	62.4%	63.6%	598	43.3%	34.4%	36	1.5%	2.1%
2	Անհատական բնակելի տուն	1,067	19.2%	242	13.7%	22.7%	271	19.6%	25.4%	554	23.1%	51.9%
3	Արտադրական նշ. շին	63	1.1%	21	1.2%	33.3%	16	1.2%	25.4%	26	1.1%	41.3%
4	Հասարակական նշ. շին.	226	4.1%	99	5.6%	43.8%	90	6.5%	39.8%	37	1.5%	16.4%
5	Ավտոտնակ	210	3.8%	155	8.7%	73.8%	44	3.2%	21.0%	11	0.5%	5.2%
6	Հող	2,245	40.4%	149	8.4%	6.6%	362	26.2%	16.1%	1,734	72.3%	77.2%
ճա	Ա/թ գյուղատնտ. նշ. հող	1,349	24.3%	29	1.6%	2.1%	173	12.5%	12.8%	1,147	47.8%	85.0%
Ընդամենը /գործարք/		5,551	100.0%	1,772	100.0%	31.9%	1,381	100.0%	24.9%	2,398	100.0%	43.2%

Գծապատկեր 2.1-6-ում և Աղյուսակ 2.1-3-ում ներկայացված է 2022 թվականի փետրվարին հանրապետությունում իրականացված օտարման գործարքների տոկոսային և քանակական բաշխվածությունը ըստ գործարքի տեսակների.

Գծապատկեր 2.1-6



Աղյուսակ 2.1-3

Օտարում	Երևան	Արագածոտն	Արարատ	Արմավիր	Գեղարքունիք	Լոռի	Կոտայք	Շիրակ	Սյունիք	Վայոց ձոր	Տավուշ	Մարզեր	Ընդամենը
Առուվաճառք	1,335	180	446	422	150	195	708	175	138	49	132	2,595	3,930
Նվիրատվություն	414	75	123	99	188	90	214	90	68	41	85	1,073	1,487
Փոխանակում	4	4	0	0	0	0	0	0	0	0	0	4	8
Օտարման այլ տեսակ	19	3	8	9	60	8	8	3	3	0	5	107	126
Ընդամենը	1,772	262	577	530	398	293	930	268	209	90	222	3,779	5,551


3 ԱՌՈՒՎԱՃԱՌՔԻ ԳՈՐԾԱՐՔՆԵՐ

3.1 Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկայում իրականացված առուվաճառքի գործարքների վերլուծություն

3.1.1 2022 թվականի փետրվարին հանրապետությունում գրանցվել է անշարժ գույքի առուվաճառքի 3,930 գործարք :


2010-2022 թվականների փետրվար ամսվա անշարժ գույքի առուվաճառքի գործարքների քանակները ներկայացված են Գծապատկեր 3.1-1-ում.

Գծապատկեր 3.1-1




3.1.2 Հանրապետությունում 2022 թվականի փետրվարին անշարժ գույքի առուվաճառքի գործարքների առավել բարձր տոկոսաչափը՝ 34.0 %, գրանցվել է Երևան քաղաքում, իսկ առավել ցածրը՝ 1.2 %՝ Վայոց ձորի մարզում

Գծապատկեր 3.1-2-ում և Գծապատկեր 3.1-3-ում ներկայացված է 2022 թվականի փետրվարին հանրապետությունում իրականացված առուվաճառքի գործարքների տոկոսային և քանակական բաշխվածությունը ըստ Երևան քաղաքի և մարզերի.



Գծապատկեր 3.1-3




Աղյուսակ 3.1-1-ում ներկայացված է 2022 թվականի փետրվարին հանրապետությունում իրականացված առուվաճառքի գործարքների քանակական համեմատությունը 2021 թվականի փետրվար և 2022 թվականի հունվար ամիսների նկատմամբ:

Աղյուսակ 3.1-1

	2021 թվականի փետրվար	փոփոխումը	2022 թվականի փետրվար	փոփոխումը	2022 թվականի հունվար
Երևան	1,152	15.9%	1,335	28.7%	1,037
Արագածոտն	234	-23.1%	180	-6.7%	193
Արարատ	469	-4.9%	446	10.1%	405
Արմավիր	473	-10.8%	422	6.6%	396
Գեղարքունիք	128	17.2%	150	66.7%	90
Լոռի	206	-5.3%	195	5.4%	185
Կոտայք	729	-2.9%	708	12.7%	628
Շիրակ	202	-13.4%	175	24.1%	141
Սյունիք	101	36.6%	138	81.6%	76
Վայոց ձոր	63	-22.2%	49	-16.9%	59
Տավուշ	145	-9.0%	132	32.0%	100
Հանրապետություն	3,902	0.7%	3,930	18.7%	3,310

Գծապատկեր 3.1-4-ում ներկայացված է 2010-2022 թվականների փետրվար ամսվա անշարժ գույքի նկատմամբ առուվաճառքի գրանցումների քանակները ըստ Երևան քաղաքի, մարզերի քաղաքային և գյուղական բնակավայրերի.

Գծապատկեր 3.1-4




2022 թվականի փետրվարին հանրապետությունում գրանցված առուվաճառքի գործարքների քանակը 2022 թվականի հունվարի համեմատ աճել է 18.7 %-ով, 2021 թվականի փետրվարի համեմատ՝ 0.7 %-ով, Երևան քաղաքում 2022 թվականի հունվարի համեմատ աճել է 28.7 %-ով, 2021 թվականի փետրվարի համեմատ՝ 15.9 %-ով, մարզերի քաղաքային բնակավայրերում 2022 թվականի հունվարի համեմատ աճել է 11.3 %-ով, 2021 թվականի փետրվարի համեմատ՝ 0.5 %-ով, իսկ գյուղական բնակավայրերում 2022

թվականի հունվարի համեմատ աճել է 15.9 %-ով, 2021 թվականի փետրվարի համեմատ՝ նվազել 8.8 %-ով:


3.1.3 Հանրապետությունում 2022 թվականի փետրվարին առուվաճառքի գործարքների առավել բարձր տոկոսաչափը՝ 40.9 %, գրանցվել է հողերի, իսկ առավել ցածրը՝ 1.2 %, արտադրական նշանակության շինությունների նկատմամբ:

Գծապատկեր 3.1-4-ում և Գծապատկեր 3.1-5-ում ներկայացված է 2022 թվականի փետրվարին հանրապետությունում անշարժ գույքի առուվաճառքի գործարքների տոկոսային և քանակական բաշխվածություններն ըստ գույքի տեսակների.

Գծապատկեր 3.1-4



Գծապատկեր 3.1-5



Աղյուսակ 3.1-2-ում ներկայացված է 2022 թվականի փետրվարին հանրապետությունում իրականացված ընդհանուր գործարքների քանակական համեմատությունը 2021 թվականի փետրվար և 2022 թվականի հունվար ամիսների նկատմամբ.

Աղյուսակ 3.1-2


Հ/Հ	Գույքի տեսակ	2021 թվականի փետրվար	փոփոխումը	2022 թվականի փետրվար	փոփոխումը	2022 թվականի հունվար
1	Բնակարան	1,133	13.8%	1,289	22.8%	1,050
2	Անհատական բնակելի տուն	584	8.2%	632	23.0%	514
3	Արտադրական նշ. շին	41	17.1%	48	-27.3%	66
4	Հասարակական նշ. շին.	165	-1.2%	163	-4.7%	171
5	Ավտոտնակ	208	-7.7%	192	23.9%	155
6	Հող	1,771	-9.3%	1,606	18.6%	1,354
6ա	ա/թ գյուղատնտ. նշ. հող	1,064	-15.7%	897	8.9%	824
Ընդամենը		3,902	0.7%	3,930	18.7%	3,310

3.2 Երևան քաղաքում անշարժ գույքի շուկայում իրականացված առուվաճառքի գործարքների վերլուծություն

3.2.1 Երևան քաղաքում 2022 թվականի փետրվարին անշարժ գույքի առուվաճառքի գործարքների առավել բարձր տոկոսաչափ՝ 16.9 %, արձանագրվել է Կենտրոն, իսկ առավել ցածրը՝ 0.7 %՝ Նուբարաշեն վարչական շրջաններում:

Գծապատկեր 3.2-1-ում ներկայացված է 2022 թվականի փետրվարին Երևան քաղաքում իրականացված առուվաճառքի գործարքների քանակական բաշխվածությունն ըստ վարչական շրջանների.

Գծապատկեր 3.2-1



Աղյուսակ 3.2-1-ում ներկայացված է 2022 թվականի փետրվարին Երևան քաղաքում իրականացված առուվաճառքի գործարքների քանակական համեմատությունը 2021 թվականի փետրվար և 2022 թվականի հունվար ամիսների նկատմամբ:


Աղյուսակ 3.2-1

Վարչական շրջան	2021 թվականի փետրվար	փոփոխումը	2022 թվականի փետրվար	փոփոխումը	2022 թվականի հունվար
Դավթաշեն	42	2.5 անգամ	104	38.7%	75
Էրեբունի	57	14.0%	65	1.6%	64
Աջափնյակ	134	19.4%	160	66.7%	96
Ավան	45	15.6%	52	48.6%	35
Արաբկիր	231	-2.2%	226	39.5%	162
Կենտրոն	143	41.3%	202	12.2%	180
Մալաթիա-Սեբաստիա	122	33.6%	163	45.5%	112
Փանաքեռ-Զեյթուն	129	-43.4%	73	40.4%	52
Շենգավիթ	125	-1.6%	123	-3.1%	127
Նոր Նորք	109	14.7%	125	6.8%	117
Նորք-Մարաշ	10	3.2 անգամ	32	2.3 անգամ	14
Նուբարաշեն	5	2.0 անգամ	10	3.3 անգամ	3
Երևան	1,152	15.9%	1,335	28.7%	1,037

3.2.2 Երևան քաղաքում 2022 թվականի փետրվարին անշարժ գույքի առուվաճառքի գործարքների առավել բարձր տոկոսաչափը՝ 63.1 %, գրանցվել է բնակարանների, իսկ առավել ցածրը՝ 1.0 % արտադրական նշանակության շինությունների նկատմամբ:

Գծապատկեր 3.2-2-ում ներկայացված է 2022 թվականի փետրվարին Երևան քաղաքում իրականացված առուվաճառքի գործարքների քանակական բաշխվածությունն ըստ գույքի տեսակի:

Գծապատկեր 3.2-2



Աղյուսակ 3.2-2-ում ներկայացված է 2022 թվականի փետրվարին Երևան քաղաքում իրականացված առուվաճառքի գործարքների քանակական համեմատությունը 2021 թվականի փետրվար և 2022 թվականի հունվար ամիսների նկատմամբ:


Ը/Ը	Գույքի տեսակ	2021 թվականի փետրվար	փոփոխումը	2022 թվականի փետրվար	փոփոխումը	2022 թվականի հունվար
1	Բնակարան	706	19.4%	843	35.3%	623
2	Անհատական բնակելի տուն	134	12.7%	151	28.0%	118
3	Արտադրական նշ. շին	8	75.0%	14	-36.4%	22
4	Հասարակական նշ. շին.	78	-15.4%	66	-8.3%	72
5	Ավտոտնակ	127	11.8%	142	57.8%	90
6	Հող	99	20.2%	119	6.3%	112
ճա	ա/թ գյուղատնտ. նշ. հող	12	66.7%	20	11.1%	18
Ընդամենը		1,152	15.9%	1,335	28.7%	1,037

3.3 Մարզերում անշարժ գույքի շուկայում իրականացված առուվաճառքի գործարքների վերլուծություն

Մարզերում 2022 թվականի փետրվարին առուվաճառքի գործարքների առավել բարձր տոկոսաչափը՝ 57.3 %, գրանցվել է հողերի, իսկ առավել ցածրը՝ 1.3 % արտադրական նշանակության շինությունների նկատմամբ:

Գծապատկեր 3.3-1-ում ներկայացված է 2022 թվականի փետրվարին մարզերում իրականացված առուվաճառքի գործարքների քանակական բաշխվածությունը ըստ գույքի տեսակի.

Գծապատկեր 3.3-1



Աղյուսակ 3.3-1-ում ներկայացված է 2022 թվականի փետրվարին մարզերում իրականացված առուվաճառքի գործարքների քանակական համեմատությունը 2021 թվականի փետրվար և 2022 թվականի հունվար ամիսների նկատմամբ.

Հ/Հ	Գույքի տեսակ	2021 թվականի փետրվար	փոփոխումը	2022 թվականի փետրվար	փոփոխումը	2022 թվականի հունվար
1	Բնակարան	427	4.4%	446	4.4%	427
2	Անհատական բնակելի տուն	450	6.9%	481	21.5%	396
3	Արտադրական նշ. շին	33	3.0%	34	-22.7%	44
4	Հասարակական նշ. շին.	87	11.5%	97	-2.0%	99
5	Ավտոտնակ	81	-38.3%	50	-23.1%	65
6	Հող	1,672	-11.1%	1,487	19.7%	1,242
6ա	ա/թ գյուղատնտ. նշ. հող	1,052	-16.6%	877	8.8%	806
Ընդամենը		2,750	-5.6%	2,595	14.2%	2,273


3.4 Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկայում իրավաբանական անձանց կողմից իրականացված առուվաճառքի գործարքների վերլուծություն

2022 թվականի փետրվարին անշարժ գույքի 472 առուվաճառքի գործարքների կողմ հանդիսացել են իրավաբանական անձինք, որը կազմել է առուվաճառքի ընդհանուր գործարքների 12.0 %-ը :

Վերոնշյալ առուվաճառքի գործարքներից 133-ի դեպքում իրավաբանական անձինք հանդիսացել են միայն գնորդ, 311-ի դեպքում՝ միայն վաճառող, իսկ 28 առուվաճառքի գործարքի դեպքում գործարքի երկու կողմն էլ հանդիսացել են իրավաբանական անձինք:

Գծապատկեր 3.4-1-ում ներկայացված են իրավաբանական անձանց կողմից 2022 թվականի փետրվարին իրականացված առուվաճառքի գործարքների քանակական և տոկոսային բաշխվածությունները.


Գծապատկեր 3.4-1




Արդյունքում 2022 թվականի փետրվարին իրավաբանական անձինք գնել են 161 միավոր անշարժ գույք և վաճառել են 339 միավոր անշարժ գույք:

Գծապատկեր 3.4-2-ում ներկայացված է իրավաբանական անձանց կողմից 2022 թվականի փետրվարին գնված անշարժ գույքերի քանակական և տոկոսային բաշխվածությունը ըստ գույքի տեսակների, իսկ Գծապատկեր 3.4-3-ում՝ իրավաբանական անձանց կողմից վաճառված անշարժ գույքերի քանակական և տոկոսային բաշխվածությունը ըստ գույքի տեսակների:

Գծապատկեր 3.4-2



Գծապատկեր 3.4-3



Աղյուսակ 3.4-1-ում ներկայացված է 2022 թվականի փետրվարին իրավաբանական անձանց կողմից գնված և վաճառված անշարժ գույքերի համամասնությունը հանրապետությունում գրանցված առուվաճառքների գործարքներում ըստ Երևանի և մարզերի:

Աղյուսակ 3.4-1

	Առուվաճառքի գործարքների քանակ	Իրավաբանական անձանց կողմից գնված անշարժ գույք			Իրավաբանական անձանց կողմից վաճառված անշարժ գույք		
		քանակ	%	տեսակարար կշիռը նմանատիպ գործարքներում	քանակ	%	տեսակարար կշիռը նմանատիպ գործարքներում
Երևան	1,335	40	24.8%	3.0%	229	67.6%	17.2%
Արագածոտն	180	11	6.8%	6.1%	4	1.2%	2.2%
Արարատ	446	3	1.9%	0.7%	8	2.4%	1.8%
Արմավիր	422	5	3.1%	1.2%	5	1.5%	1.2%
Գեղարքունիք	150	5	3.1%	3.3%	4	1.2%	2.7%
Լոռի	195	15	9.3%	7.7%	7	2.1%	3.6%
Կոտայք	708	58	36.0%	8.2%	65	19.2%	9.2%
Շիրակ	175	0	0.0%	0.0%	8	2.4%	4.6%
Սյունիք	138	7	4.3%	5.1%	2	0.6%	1.4%
Վայոց Ձոր	49	5	3.1%	10.2%	4	1.2%	8.2%
Տավուշ	132	12	7.5%	9.1%	3	0.9%	2.3%
Հանրապետություն	3,930	161	100.0%	4.1%	339	100.0%	8.6%

Աղյուսակ 3.4-2-ում ներկայացված է 2022 թվականի փետրվարին իրավաբանական անձանց կողմից գնված և վաճառված անշարժ գույքերի քանակական համեմատությունը 2022 թվականի հունվարի նկատմամբ.

Աղյուսակ 3.4-2

	Իրավաբանական անձանց կողմից գնված անշարժ գույք					Իրավաբանական անձանց կողմից վաճառված անշարժ գույք				
	2021 թվականի փետրվար	փոփոխումը	2022 թվականի փետրվար	փոփոխում	2022 թվականի հունվար	2021 թվականի փետրվար	փոփոխումը	2022 թվականի փետրվար	փոփոխումը	2022 թվականի հունվար
Երևան	28	42.9%	40	-7.0%	43	304	-24.7%	229	16.8%	196
Արագածոտն	10	10.0%	11	0.0%	11	3	33.3%	4	33.3%	3
Արարատ	2	50.0%	3	-70.0%	10	7	14.3%	8	-27.3%	11
Արմավիր	28	-82.1%	5	-73.7%	19	15	-66.7%	5	-61.5%	13
Գեղարքունիք	3	66.7%	5	-28.6%	7	4	0.0%	4	0.0%	4
Լոռի	8	87.5%	15	36.4%	11	5	40.0%	7	16.7%	6
Կոտայք	40	45.0%	58	41.5%	41	46	41.3%	65	10.2%	59
Շիրակ	3	3-ով պակաս	0	3-ով պակաս	2	1	8.0 անգամ	8	33.3%	6
Սյունիք	4	75.0%	7	133.3%	3	1	2.0 անգամ	2	2-ով ավել	0
Վայոց Ձոր	6	-16.7%	5	0.0%	5	1	4.0 անգամ	4	4-ով ավել	0
Տավուշ	5	140.0%	12	20.0%	10	2	50.0%	3	0.0%	3
Հանրապետություն	137	17.5%	161	-0.6%	162	389	-12.9%	339	12.6%	301

Աղյուսակ 3.4-3-ում ներկայացված է 2022 թվականի փետրվարին իրավաբանական անձանց կողմից գնված և վաճառված անշարժ գույքերի համամասնությունը հանրապետությունում գրանցված առուվաճառքների գործարքներում ըստ գույքի տեսակների.

Աղյուսակ 3.4.3

Գույքի տեսակ		Առուվաճառքի գործարքների քանակ	Իրավաբանական անձանց կողմից գնված անշարժ գույք			Իրավաբանական անձանց կողմից վաճառված անշարժ գույք		
			քանակ	%	տեսակարար կշիռը նմանատիպ գործարքներում	քանակ	%	տեսակարար կշիռը նմանատիպ գործարքներում
1	Բնակարան	1,289	9	5.6%	0.7%	169	49.9%	13.1%
2	Անհատական բնակելի տուն	632	18	11.2%	2.8%	31	9.1%	4.9%
3	Արտադրական նշ. շին.	48	9	5.6%	18.8%	15	4.4%	31.3%
4	Հասարակական նշ. շին.	163	12	7.5%	7.4%	31	9.1%	19.0%
5	Ավտոտնակ	192	1	0.6%	0.5%	69	20.4%	35.9%
6	Հող	1,606	112	69.6%	7.0%	24	7.1%	1.5%
6ա	Ա/թ գյուղատնտ. նշ. հող	897	54	33.5%	6.0%	14	4.1%	1.6%
Ընդամենը		3,930	161	100.0%	4.1%	339	100.0%	8.6%

Աղյուսակ 3.4.4-ում ներկայացված է 2022 թվականի փետրվարին իրավաբանական անձանց կողմից գնված և վաճառված անշարժ գույքերի քանակական համեմատությունը 2022 թվականի հունվարի նկատմամբ:

Աղյուսակ 3.4.4

		Իրավաբանական անձանց կողմից գնված անշարժ գույք					Իրավաբանական անձանց կողմից վաճառված անշարժ գույք				
		2021 թվականի փետրվար	փոփոխումը	2022 թվականի փետրվար	փոփոխումը	2022 թվականի հունվար	2021 թվականի փետրվար	փոփոխումը	2022 թվականի փետրվար	փոփոխումը	2022 թվականի հունվար
1	Բնակարան	6	50.0%	9	-18.2%	11	238	-29.0%	169	14.2%	148
2	Անհատական բնակելի տուն	10	80.0%	18	28.6%	14	13	2.4 անգամ	31	34.8%	23
3	Արտադրական նշ. շին.	7	28.6%	9	-40.0%	15	9	66.7%	15	-28.6%	21
4	Հասարակական նշ. շին.	11	9.1%	12	-58.6%	29	15	2.1 անգամ	31	-22.5%	40
5	Ավտոտնակ	0	1-ով ավել	1	-75.0%	4	58	19.0%	69	60.5%	43
6	Հող	103	8.7%	112	25.8%	89	56	-57.1%	24	-7.7%	26
6ա	Ա/թ գյուղատնտ. նշ. հող	84	-35.7%	54	-6.9%	58	45	-68.9%	14	2.0 անգամ	7
Ընդամենը		137	17.5%	161	-0.6%	162	389	-12.9%	339	12.6%	301

3.5 Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկայում օտարերկրյա քաղաքացիների կողմից իրականացված առուվաճառքի գործարքների վերլուծություն


2022 թվականի փետրվարին անշարժ գույքի 341 առուվաճառքի գործարքների կողմ են հանդիսացել օտարերկրյա քաղաքացիները, որը կազմել է առուվաճառքի ընդհանուր գործարքների 8.7 %-ը:

Առուվաճառքի գործարքներից 103-ի դեպքում օտարերկրյա քաղաքացիները հանդիսացել են միայն գնորդ, 229-ի դեպքում՝ միայն վաճառող, իսկ 9 առուվաճառքի

գործարքի դեպքում գործարքի երկու կողմն էլ հանդիսացել են օտարերկրյա քաղաքացիները:

Գծապատկեր 3.5-1-ում ներկայացված է օտարերկրյա քաղաքացիների կողմից 2022 թվականի փետրվարին իրականացված առուվաճառքի գործարքների քանակական և տոկոսային բաշխվածությունը.


Գծապատկեր 3.5-1



Արդյունքում 2022 թվականի փետրվարին օտարերկրյա քաղաքացիները գնել են 112 միավոր անշարժ գույք և վաճառել են 238 միավոր անշարժ գույք:

Գծապատկեր 3.5-2-ում ներկայացված է օտարերկրյա քաղաքացիների կողմից 2022 թվականի փետրվարին գնված անշարժ գույքերի քանակական և տոկոսային բաշխվածությունը ըստ գույքի տեսակների, իսկ Գծապատկեր 3.5-3-ում՝ օտարերկրյա քաղաքացիների կողմից վաճառված անշարժ գույքերի քանակական և տոկոսային բաշխվածությունը ըստ գույքի տեսակների.

Գծապատկեր 3.5-2



**Օտարերկրյա քաղաքացիների կողմից վաճառված գույքերի
բաշխվածությունը ըստ տեսակների**



Աղյուսակ 3.5-1-ում ներկայացված է 2022 թվականի փետրվարին օտարերկրյա քաղաքացիների կողմից գնված և վաճառված անշարժ գույքերի համամասնությունը առուվաճառքների գործարքներում ըստ Երևան քաղաքի և մարզերի.

Աղյուսակ 3.5-1

	Առուվաճառքի գործարքների քանակ	Օտարերկրյա քաղաքացիների կողմից գնված անշարժ գույք			Օտարերկրյա քաղաքացիների կողմից վաճառված անշարժ գույք		
		քանակ	%	տեսակարար կշիռը նմանատիպ գործարքներում	քանակ	%	տեսակարար կշիռը նմանատիպ գործարքներում
Երևան	1,335	65	58.0%	4.9%	81	34.0%	6.1%
Արագածոտն	180	2	1.8%	1.1%	12	5.0%	6.7%
Արարատ	446	6	5.4%	1.3%	34	14.3%	7.6%
Արմավիր	422	4	3.6%	0.9%	17	7.1%	4.0%
Գեղարքունիք	150	3	2.7%	2.0%	13	5.5%	8.7%
Լոռի	195	2	1.8%	1.0%	14	5.9%	7.2%
Կոտայք	708	19	17.0%	2.7%	21	8.8%	3.0%
Շիրակ	175	4	3.6%	2.3%	31	13.0%	17.7%
Սյունիք	138	3	2.7%	2.2%	2	0.8%	1.4%
Վայոց Ձոր	49	0	0.0%	0.0%	3	1.3%	6.1%
Տավուշ	132	4	3.6%	3.0%	10	4.2%	7.6%
Հանրապետություն	3,930	112	100.0%	2.8%	238	100.0%	6.1%

Աղյուսակ 3.5-2-ում ներկայացված է 2022 թվականի փետրվարին օտարերկրյա քաղաքացիների կողմից գնված և վաճառված անշարժ գույքերի քանակական համեմատությունը 2021 թվականի փետրվար և 2022 թվականի հունվար ամիսների նկատմամբ.

Աղյուսակ 3.5-2

	Օտարերկրյա քաղաքացիների կողմից գնված անշարժ գույք					Օտարերկրյա քաղաքացիների կողմից վաճառված անշարժ գույք				
	2021 թվականի փետրվար	փոփոխումը	2022 թվականի փետրվար	փոփոխումը	2022 թվականի հունվար	2021 թվականի փետրվար	փոփոխումը	2022 թվականի փետրվար	փոփոխումը	2022 թվականի հունվար
Երևան	43	51.2%	65	22.6%	53	39	2.1 անգամ	81	26.6%	64
Արագածոտն	1	2.0 անգամ	2	-50.0%	4	11	9.1%	12	2.4 անգամ	5
Արարատ	5	20.0%	6	0.0%	6	25	36.0%	34	6.3%	32
Արմավիր	8	-50.0%	4	-20.0%	5	21	-19.0%	17	6.3%	16
Գեղարքունիք	1	3.0 անգամ	3	3.0 անգամ	1	10	30.0%	13	3.3 անգամ	4
Լոռի	4	-50.0%	2	-60.0%	5	18	-22.2%	14	-33.3%	21
Կոտայք	8	2.4 անգամ	19	35.7%	14	29	-27.6%	21	5.0%	20
Շիրակ	3	33.3%	4	-55.6%	9	27	14.8%	31	3.1 անգամ	10
Սյունիք	0	3-ով ավել	3	3-ով ավել	0	10	-80.0%	2	2.0 անգամ	1
Վայոց Ձոր	0	0.0%	0	0.0%	0	4	-25.0%	3	50.0%	2
Տավուշ	3	33.3%	4	-50.0%	8	18	-44.4%	10	-33.3%	15
Հանրապետություն	76	47.4%	112	6.7%	105	212	12.3%	238	25.3%	190

Աղյուսակ 3.5-3-ում ներկայացված է 2022 թվականի փետրվարին օտարերկրյա քաղաքացիների կողմից գնված և վաճառված անշարժ գույքերի համամասնությունը հանրապետությունում գրանցված առուվաճառքների գործարքներում ըստ գույքի տեսակների.

Աղյուսակ 3.5-3

Գույքի տեսակ		Առուվաճառքի գործարքների քանակ	Օտարերկրյա քաղաքացիների կողմից գնված անշարժ գույք			Օտարերկրյա քաղաքացիների կողմից վաճառված անշարժ գույք		
			քանակ	%	տեսակարար կշիռը նմանատիպ գործարքներում	քանակ	%	տեսակարար կշիռը նմանատիպ գործարքներում
1	Բնակարան	1,289	40	35.7%	3.1%	100	42.0%	7.8%
2	Անհատական բնակելի տուն	632	21	18.8%	3.3%	59	24.8%	9.3%
3	Արտադրական նշ. շին	48	9	8.0%	18.8%	1	0.4%	2.1%
4	Հասարակական նշ. շին.	163	8	7.1%	4.9%	4	1.7%	2.5%
5	Ավտոտնակ	192	1	0.9%	0.5%	6	2.5%	3.1%
6	Հող	1,606	33	29.5%	2.1%	68	28.6%	4.2%
6ա	Ա/թ գյուղատնտ. նշ. հող	897	0	0.0%	0.0%	44	18.5%	4.9%
Ընդամենը		3,930	112	100.0%	2.8%	238	100.0%	6.1%

Աղյուսակ 3.5-4-ում ներկայացված է 2022 թվականի փետրվարին օտարերկրյա քաղաքացիների կողմից գնված և վաճառված անշարժ գույքերի քանակական համեմատությունը 2021 թվականի փետրվար և 2022 թվականի հունվար ամիսների նկատմամբ.

Աղյուսակ 3.5-4

		Օտարերկրյա քաղաքացիների կողմից գնված անշարժ գույք				Օտարերկրյա քաղաքացիների կողմից վաճառված անշարժ գույք					
		2021 թվականի փետրվար	փոփոխումը	2022 թվականի փետրվար	փոփոխումը	2022 թվականի հունվար	2021 թվականի փետրվար	փոփոխումը	2022 թվականի փետրվար	փոփոխումը	2022 թվականի հունվար
1	Բնակարան	35	14.3%	40	-25.9%	54	72	38.9%	100	12.4%	89
2	Անհատական բնակելի տուն	20	5.0%	21	10.5%	19	62	-4.8%	59	51.3%	39
3	Արտադրական նշ. շին.	1	9.0 անգամ	9	80.0%	5	0	1-ով ավել	1	0.0%	1
4	Հասարակական նշ. շին.	1	8.0 անգամ	8	2.0 անգամ	4	6	-33.3%	4	0.0%	4
5	Ավտոտնակ	6	-83.3%	1	-87.5%	8	4	50.0%	6	20.0%	5
6	Հող	13	2.5 անգամ	33	2.2 անգամ	15	68	0.0%	68	30.8%	52
6ա	Ա/թ գյուղատնտ. նշ. հող	0	0.0%	0	0.0%	0	41	7.3%	44	41.9%	31
Ընդամենը		76	47.4%	112	6.7%	105	212	12.3%	238	25.3%	190

Աղյուսակ 3.5-5-ում ներկայացված է 2022 թվականի փետրվարին օտարերկրյա քաղաքացիների կողմից գնված, իսկ Աղյուսակ 3.5-6-ում՝ օտարերկրյա քաղաքացիների կողմից վաճառված անշարժ գույքերի համամասնությունները ըստ պետությունների և տարածաշրջանների:

Աղյուսակ 3.5-5

Պետության անվանումը	Բնակարան	Բնակելի տուն	Արտադ. նշ. շին.	Հասար. նշ. շին.	Ավտոտնակ	Հող	ա/թ գյուղ. նշ.	Ընդամենը
Ռուսաստանի Դաշնություն	28	11	1	3	7	18	0	68
ԱՄՆ	1	4	0	2	1	3	0	11
Իրան	2	0	0	0	0	1	0	3
Սիրիա	0	0	0	0	0	0	0	0
Եվրոպական պետություններ	7	2	1	1	0	7	0	18
ԱՊՀ պետություններ, բացառությամբ ՌԴ	2	2	0	2	0	0	0	6
Այլ պետություններ	0	2	0	0	0	4	0	6
ԸՆԴԱՄԵՆԸ	40	21	2	8	8	33	0	112

Աղյուսակ 3.5-6

Պետության անվանումը	Բնակարան	Բնակելի տուն	Արտադ. նշ. շին.	Հասար. նշ. շին.	Ավտոտնակ	Հող	ա/թ գյուղ. նշ.	Ընդամենը
Ռուսաստանի Դաշնություն	72	47	0	3	4	59	42	185
ԱՄՆ	7	3	0	0	0	1	0	11
Իրան	1	2	0	0	1	0	0	4
Սիրիա	0	0	0	0	0	0	0	0
Եվրոպական պետություններ	8	1	1	1	0	2	0	13
ԱՊՀ պետություններ, բացառությամբ ՌԴ	10	5	0	0	0	5	2	20
Այլ պետություններ	2	1	0	0	1	1	0	5
ԸՆԴԱՄԵՆԸ	100	59	1	4	6	68	44	238

Աղյուսակ 3.5-7-ում ներկայացված է 2022 թվականի փետրվարին օտարերկրյա քաղաքացիների կողմից գնված և վաճառված անշարժ գույքերի քանակական

համեմատությունը 2021 թվականի փետրվար և 2022 թվականի հունվար ամիսների նկատմամբ.


Աղյուսակ 3.5-7

Պետության անվանումը	Օտարերկրյա քաղաքացիների կողմից գնված անշարժ գույք					Օտարերկրյա քաղաքացիների կողմից վաճառված անշարժ գույք				
	2021 թվականի փետրվար	փոփոխումը	2022 թվականի փետրվար	փոփոխումը	2022 թվականի հունվար	2021 թվականի փետրվար	փոփոխումը	2022 թվականի փետրվար	փոփոխումը	2022 թվականի հունվար
Ռուսաստանի Դաշնություն	37	83.8%	68	9.7%	62	173	6.9%	185	27.6%	145
ԱՄՆ	12	-8.3%	11	-21.4%	14	11	0.0%	11	-15.4%	13
Իրան	8	-62.5%	3	-40.0%	5	8	-50.0%	4	-33.3%	6
Սիրիա	1	1-ով ավել	0	0.0%	0	0	0.0%	0	0.0%	0
Եվրոպական պետություններ	12	50.0%	18	38.5%	13	7	85.7%	13	0.0%	13
ԱՊՀ պետություններ, բացառությամբ ՌԴ	4	50.0%	6	0.0%	6	10	2	20	81.8%	11
Այլ պետություններ	2	3.0 անգամ	6	20.0%	5	3	66.7%	5	2.5 անգամ	2
ԸՆԴԱՄԵՆԸ	76	47.4%	112	6.7%	105	212	12.3%	238	25.3%	190

3.6 Բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների վերլուծություն

3.6.1 Հանրապետությունում 2022 թվականի փետրվարին իրականացվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի 1,289 գործարք: 2022 թվականի փետրվարին հանրապետությունում գրանցված բնակարանների առուվաճառքի գործարքների քանակը 2022 թվականի հունվարի համեմատ աճել է 22.8 %-ով, 2021 թվականի փետրվարի համեմատ՝ 13.8 %-ով:

Գծապատկեր 3.6-1-ում ներկայացված է 2022 թվականի փետրվարին հանրապետությունում իրականացված բնակարանների առուվաճառքի գործարքների տոկոսային բաշխվածությունը ըստ Երևան քաղաքի և մարզերի.



Աղյուսակ 3.6-1-ում ներկայացված է 2022 թվականի փետրվարին հանրապետությունում իրականացված բնակարանների առուվաճառքի գործարքների քանակական համեմատությունը 2021 թվականի փետրվար և 2022 թվականի հունվար ամիսների նկատմամբ:

Աղյուսակ 3.6-1


	2021 թվականի փետրվար	փոփոխումը	2022 թվականի փետրվար	փոփոխումը	2022 թվականի հունվար
Երևան	706	19.4%	843	35.3%	623
Արագածոտն	13	-7.7%	12	-29.4%	17
Արարատ	32	0.0%	32	3.2%	31
Արմավիր	48	-12.5%	42	5.0%	40
Գեղարքունիք	28	-3.6%	27	2.1 անգամ	13
Լոռի	60	13.3%	68	9.7%	62
Կոտայք	114	29.8%	148	-3.9%	154
Շիրակ	63	-6.3%	59	13.5%	52
Սյունիք	36	-13.9%	31	19.2%	26
Վայոց ձոր	12	-25.0%	9	-18.2%	11
Տավուշ	21	-14.3%	18	-14.3%	21
Հանրապետություն	1,133	13.8%	1,289	22.8%	1,050

3.6.2 Երևան քաղաքում 2022 թվականի փետրվարին իրականացվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի 843 գործարք, 2022 թվականի փետրվարին Երևան քաղաքում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակը 2022 թվականի հունվարի համեմատ աճել է 35.3 %-ով, իսկ 2021 թվականի փետրվարի համեմատ՝ 19.4 %-ով:

Երևան քաղաքում 2022 թվականի փետրվարին բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակի առավել բարձր տոկոսաչափ՝ 18.1-%, արձանագրվել է Արարկիր, իսկ առավել ցածրը՝ 0.2 %՝ Նուբարաշեն վարչական շրջաններում:

Գծապատկեր 3.6-2-ում ներկայացված է 2022 թվականի փետրվարին Երևան քաղաքում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակական բաշխվածությունը ըստ վարչական շրջանների:

Գծապատկեր 3.6-2



Աղյուսակ 3.6-2-ում ներկայացված են 2022 թվականի փետրվարին Երևան քաղաքում վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների պայմանագրային գների և վաճառահանված բնակարանների առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների շուկայական միջինացված գները՝ 1 մ² մակերեսի հաշվարկով, ըստ վարչական շրջանների և տարածագնահատման գոտիների:

Աղյուսակ 3.6-2

Վարչական շրջան	2021 թվականի փետրվար	փոփոխումը	2022 թվականի փետրվար	փոփոխումը	2022 թվականի հունվար
Կենտրոն միջին	605,200	14.1%	690,550	1.1%	683,000
Կենտրոն (Գոտի 1)	748,050	13.8%	851,000	1.1%	842,000
Կենտրոն (Գոտի 2)	600,000	20.0%	720,100	1.4%	710,100
Կենտրոն (Գոտի 3)	500,500	20.5%	603,000	1.3%	595,000
Կենտրոն (Գոտի 4)	444,500	21.6%	540,300	0.2%	539,200
Կենտրոն (Գոտի 5)	375,000	17.4%	440,100	1.6%	433,050
Արաբկիր միջին	435,000	12.7%	490,100	1.5%	483,000
Արաբկիր (Գոտի 3)	495,000	7.1%	530,000	1.3%	523,000
Արաբկիր (Գոտի 4)	483,000	6.6%	515,000	0.6%	512,000
Արաբկիր (Գոտի 5)	400,100	14.8%	459,300	1.1%	454,200
Արաբկիր (Գոտի 7)	305,000	20.6%	367,900	1.2%	363,500

Քանաքեռ-Զեյթուն միջին	313,500	15.0%	360,500	0.6%	358,200
Քանաքեռ-Զեյթուն (Գոտի 4)	368,200	10.0%	405,200	-0.7%	408,100
Քանաքեռ-Զեյթուն (Գոտի 5)	329,000	14.1%	375,500	0.4%	374,000
Քանաքեռ-Զեյթուն (Գոտի 6)	330,000	7.2%	353,800	0.5%	352,200
Քանաքեռ-Զեյթուն (Գոտի 7)	290,000	5.9%	307,000	1.8%	301,600
Նոր-Նորք միջին	292,100	5.8%	309,000	0.0%	309,000
Նոր-Նորք (Գոտի 5)	350,000	4.6%	366,200	0.3%	365,000
Նոր-Նորք (Գոտի 6)	310,000	5.2%	326,000	0.0%	326,000
Նոր-Նորք (Գոտի 7)	290,500	2.4%	297,500	-0.2%	298,000
Նոր-Նորք (Գոտի 8)	256,100	5.3%	269,600	-0.3%	270,500
Էրեբունի միջին	280,500	12.5%	315,500	1.4%	311,200
Էրեբունի (Գոտի 5)	325,000	15.1%	374,000	0.5%	372,000
Էրեբունի (Գոտի 6)	293,000	14.4%	335,100	0.9%	332,050
Էրեբունի (Գոտի 7)	302,000	8.3%	327,100	0.0%	327,100
Էրեբունի (Գոտի 8)	248,500	16.0%	288,300	0.8%	286,100
Էրեբունի (Գոտի 9)	212,050	13.2%	240,000	1.7%	236,000
Շենգավիթ միջին	296,100	9.3%	323,500	1.1%	320,100
Շենգավիթ (Գոտի 5)	347,500	5.6%	366,800	0.2%	366,100
Շենգավիթ (Գոտի 6)	311,000	6.9%	332,400	-0.2%	333,100
Շենգավիթ (Գոտի 7)	304,100	3.3%	314,100	-0.3%	315,000
Շենգավիթ (Գոտի 8)	282,200	10.6%	312,200	0.7%	310,100
Շենգավիթ (Գոտի 9)	250,000	9.6%	274,100	1.1%	271,000
Դավթաշեն միջին	314,000	13.5%	356,500	0.8%	353,500
